ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշսթի 1

№ 5260-Ա « 24 » դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 1565-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1.Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 25-ի «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների՝ 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 1565-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝ «Երևանի Ա.Գաբրիելյանի անվան արվեստի դպրոց», Երևանի Ավան համայնքի «Գ. Բուդաղյանի անվան արվեստի դպրոց», «Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Մ.Մալունցյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Բարսեղ Կանաչյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի «Կոնստանտին Օրբելյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Ղ.Սարյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի «Ս.Բարխուդարյանի անվան թիվ 2 արվեստի դպրոց» և «Քանաքեռ-Զեյթուն համայնքի Մինաս Ավետիսյանի անվան կերպարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվների NN 1-22 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-22 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի համապատասխան վարչական շրջանների ղեկավարների և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ